ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության առաջիկա տասը տարիների տեսլականն է ունենալ կայուն զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսություն:

Ռազմավարությունում մանրակրկիտ ներկայացված են գյուղատնտեսական քաղաքականության մեջ պետության հիմնական առաջնահերթությունները, սահմանված են առաջնային խնդիրների շրջանակն ու տվյալ ռազմավարության իրականացման 2020-2022 թվականների գործողությունների պլանը:

Ռազմավարությունը հիմնված է յոթ սկզբունքների վրա, որոնք պետք է վերածվեն նպատակների և դրանցից բխող միջոցառումների՝

1. ագրեգացում,
2. առևտրայնացում,
3. կողմնորոշում դեպի որակ,
4. երիտասարդության ներգրավվածություն,
5. դիվերսիֆիկացում և ռիսկերի կառավարում,
6. կլիմայի փոփոխություններին հարմարվողականություն, դիմադրողականություն և շրջակա միջավայրի կայունություն,
7. տեխնոլոգիաների արդիականացում:

Ռազմավարությամբ գյուղատնտեսության ոլորտի գերակայություններն են՝

1. հողային բարեփոխում,
2. արտահանման դիվերսիֆիկացում,
3. առևտրայնացում և ավելացված արժեք,
4. տեխնոլոգիական արդիականացում և նորարարություն,
5. մարդկային կարողությունների և հմտությունների զարգացում,
6. գյուղական զարգացում,
7. ինստիտուցիոնալ կարողություններ:

Վերոնշյալ գերակայությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական յոթ առաջնահերթություններում՝

1. բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը և արդյունավետությունը,
2. ապահովել սննդամթերքի անվտանգությունը,
3. բարելավել պարենային անվտանգությունը և սնուցումը,
4. զարգացնել տեղական շուկաները և ավելացնել արտահանման հնարավորությունները,
5. զարգացնել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները գյուղատնտեսության ոլորտում,
6. աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը,
7. խթանել թվային գյուղատնտեսությունը և տեխնոլոգիական նորարարությունները:

Ռազմավարության իրականացման առաջիկա երեք տարիների գործողությունների պլանը ուղղված է գյուղատնտեսական արտադրանքի աճին, գյուղական բնակավայրերի զարգացմանը և համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի մրցունակության բարձրացմանը:

Ռազմավարության ազդեցությունը տեսանելի կլինի հաջորդ տասնամյակում, իսկ փոփոխություններն ու արդյունքներն ակնհայտ կլինեն հետևյալ ժամկետներում՝ կարճատև (1-1.5 տարի), միջին տևողությամբ (3-5 տարի) և երկարատև (5-10 տարի):